ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 սեպտեմբերի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

122
(3331)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԻ ՔԱՆԻ ՎԱՐԿԱԾ ԵՆ ՔՆՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ ՊՆ N զորամասում պայմանագրային զինծառայող Դ. Կ.-ի մահվան դեպքով իրավապահները մի քանի վարկած են քննում՝ պարզելու, թե ինչ հանգամանքներ կարող էին զինծառայողին դրդել նման քայլի:

Վարույթի շրջանակում պարզվել է, որ զինծառայողը նախկինում անցել է թմրամիջոցների հետ կապված վարույթով: Քննության առարկա են նաեւ նրա հնարավոր պարտքերի եւ օնլայն խաղերի հետ կապված խնդիրների վերաբերյալ տեղեկությունները:

Դեպքի առթիվ հարցաքննվել են նաեւ զինծառայողի ծառայակիցները: «Ժողովուրդ»-ի աղբյուրների փոխանցմամբ՝ նրանք հայտնել են, որ դեպքից առաջ Դ. Կ.-ն հանգիստ է եղել, եւ նրա վարքագծում որեւէ արտառոց փոփոխություն չեն նկատել:

Հիշեցնենք՝ սեպտեմբերի 24-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել էր, որ ՊՆ N զորամասում դեռեւս չպարզված հանգամանքներում պայթյունի հետեւանքով մահացել է պայմանագրային զինծառայող Դ. Կ.-ն:

ՊՆ-ն նշել էր, որ դեպքի հանգամանքներն ամբողջությամբ պարզելու նպատակով ընթանում է քննություն:

Նկատենք, որ պաշտոնական հաղորդագրությունում մահվան պատճառը որպես ինքնասպանություն նշված չէ, ուստի քննության այս փուլում վերջնական վարկածի մասին խոսել հնարավոր չէ:

ArmLur.am-ը շարունակում է իր ընթերցողներին ներկայացնել համայնքների ղեկավարների հայտարարագրած ունեցվածքը: Այս անգամ ուսումնասիրել ենք Լոռու մարզի Ալավերդի խոշորացված համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյանի՝ 2025 թվականի տարեկան հայտարարագիրը: Դավիթ Ղումաշյանը համայնքային կառավարման ոլորտում պաշտոններ է զբաղեցրել դեռեւս 2016 թվականից: 2016թ. հոկտեմբերի 2-ին նա ընտրվել է Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի պաշտոնում, իսկ 2017 թվականի նոյեմբերի 5-ին՝ արդեն Շնող խոշորացված համայնքի ղեկավար: 2023 թվականին զբաղեցրել է «Թեղուտ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի խորհրդականի պաշտոնը: 2023 թվականի դեկտեմբերի 8-ին ստանձնել է Լոռու մարզի Ալավերդի խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնը: Ղումաշյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է: Հայտարարագրի համաձայն՝ 2025 թվականի վերջում Դավիթ Ղումաշյանն ունեցել է 12 միավոր անշարժ գույք: Դրանց թվում են հողամասեր, Ռուսաստանի Դաշնությունում գտնվող բնակարան, Ալավերդիում հասարակական եւ արտադրական նշանակության շինություններ, անհատական բնակելի տներ եւ բնակարաններ: Գույքի մի մասը նրա սեփականությունն է, իսկ մյուսները՝ բաժնային կամ համատեղ սեփականության իրավունքով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ Մասիսի համայնքապետի առաջիկա ընտրությունները բավական ուշագրավ են լինելու: Իշխանությունն արդեն ընտրել է իր թեկնածուին, որը, ըստ ArmLur.am-ի տեղեկությունների, Հովհաննես Հակոբյանն է: Նա համակարգում հայտնի է որպես անձնագրային ծառայության ղեկավար: Մեր տեղեկություններով՝ նրա թեկնածության թիկունքում կանգնած է ՀՀ վարչապետի աշխատակազմի գործերի նախկին կառավարիչ Գարիկ Բոշյանը: Բոշյանի անունը վերջին շրջանում ակտիվ շրջանառվեց Ծառուկյանին պատկանած Երեւանի «Արարատ» կոնյակի-գինու-օղու կոմբինատի կառավարման համատեքստում: Ինչպես հայտնի է, կոմբինատի կառավարումն անցել է պետությանը, իսկ Բոշյանը վերջերս նշանակվել է ընկերության կառավարիչ: ArmLur.am-ին հասած տեղեկություններով՝ իշխանությունը վերջին ընտրությունների գրանցած արդյունքներից ոգեշնչված է Բոշյանին վստահել Դավիթ Համբարձումյանի դեմ պայքարելու «սուրբ գործը»: Նա այս տարվա խորհրդարանական ընտրությունների ընթացքում համակարգել է իշխող կուսակցության նախընտրական շտաբի աշխատանքը, իսկ ՔՊ-ն Մասիսում ստացել էր ձայների ավելի քան 50 տոկոսը: Այս ֆոնին Մասիսի առաջիկա ընտրությունը խոստանում է բավական թեժ լինել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի՝ Երեւանի բնակիչները երեկ հայտնվեցին մի իրավիճակում, որը վաղուց պետք է լիներ ոչ թե սոցիալական ցանցերի քննարկման, այլ պետական մարմինների օպերատիվ արձագանքի առարկա: Մայրաքաղաքի տարբեր հատվածներից քաղաքացիները հրապարակում էին տեսանյութեր, որտեղ իրենց ծորակներից հոսող ջուրը սովորական խմելու ջրի տեսք չուներ՝ պղտոր, գունափոխված, որոշ դեպքերում նաեւ տհաճ հոտով: Արդյունքը սպասելի էր. քաղաքացիների մի մասը շտապեց խանութներ՝ շշալցված ջուր գնելու: «Ժողովուրդ»-ը նկատել է, որ ամբողջ Երեւանում ջրի հերթեր են, դատարկվող դարակներ, անհանգստացած մարդիկ. սա արդեն պարզապես հերթական վթարային ջրանջատման պատմություն չէր, այլ հանրային անվտանգության եւ վստահության լուրջ խնդիր: Խնդրի ֆոնին սեպտեմբերի 23-ին «Արզական-Քանաքեռ-Զովունի» մայրուղային ջրատարի վրա խոշոր վթար էր տեղի ունեցել: «Վեոլիա Ջուր»-ը հայտարարել էր վթարային ջրանջատումների մասին, որոնք վերաբերում էին Երեւանին, ինչպես նաեւ Արարատի, Արմավիրի եւ Կոտայքի մարզերի մի շարք բնակավայրերի: Ընկերության պաշտոնական հաղորդագրություններում նշվում է, որ վթարի վերացման աշխատանքները շարունակվում են, իսկ որոշ հասցեներում ջրամատակարարումն իրականացվում է ժամանակացույցի խախտումներով:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԵՍ ՈՐԵՎԷ ՊԱՀԻ ՉԵՄ ՆԵՐԿԱՅԱՑԵԼ ՈՐՊԵՍ ՄԱՐԶՊԵՏ»

ArmLur.am-ը զրուցել է Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի հետ: Խոսել ենք վերջերս Սարգսյանի եւ բաղաքացու միջեւ տեղի ունեցած միջադեպից:

- Լրատվամիջոցներին ներկայացվել է, որ Դուք՝ որպես մարզպետ, սպառնացել եք քաղաքացուն, վախեցրել եք նրան, պահանջել եք էլեկտրական մեքենայի լիցքավորման սարքը մի տեղից մյուսը տեղափոխել, իսկ հետո քաղաքացին, վախի մթնոլորտում, դիմել է ոստիկանություն: Ի՞նչ է իրականում տեղի ունեցել:

- Նախ՝ իրականությունը քաղաքացին այնպես չի ներկայացրել, ինչպես որ իրականում եղել է: Այդ պատմությունը մի քանի ամիս շարունակվող իրավիճակի արդյունք է:

Մոտ երկու ամիս եւ ավելի, գրեթե ամեն օր եւ հատկապես ուշ ժամերին՝ գիշերվա 2-3-ի սահմաններում, այդ տանը ինչ-որ ձայներ էին լսվում: Սկզբում չէի կարողանում հասկանալ, թե որտեղից են դրանք գալիս: Որոշ ժամանակ անց պարզվեց, որ պատին ինչ-որ սարք է տեղադրված, որը նման ձայներ է արձակում: Փորձեցի պարզել, թե ում է պատկանում այդ սարքը եւ ով է այն տեղադրել: Պարզեցի, որ այն տեղադրել է վերեւի հարկի հարեւանը: Նրա հեռախոսահամարը փոխանցեցին, եւ կապ հաստատեցինք նրա հետ: Ես առաջինը կապվող անձը չեմ եղել. կապվել են նրա հետ եւ խնդրել, որ եթե ունի տվյալ սարքավորման օրինական տեղադրման վերաբերյալ փաստաթղթեր, ներկայացնի դրանք: Խոսքը էլեկտրական մեքենայի լիցքավորման սարքի մասին էր: Քաղաքացին պատասխանեց, որ ունի բոլոր անհրաժեշտ համաձայնությունները, եւ սարքավորումը օրինական է տեղադրված: Այստեղ ուզում եմ նաեւ հստակեցնել, որ այդ տունը իմ սեփական տունը չէ: Դա իմ լուսահոգի աներոջ տունն է, որտեղ ես ժամանակավորապես բնակվում եմ: Երբ քաղաքացին ասաց, որ ունի բոլոր անհրաժեշտ համաձայնությունները, ես փորձեցի հասկանալ՝ արդյոք նա ունի տանտիրոջ համաձայնությունը՝ այդ սարքավորումն այնտեղ տեղադրելու համար: Պարզվեց, որ նման համաձայնություն որեւէ մեկը չէր տվել: Այնուհետեւ տուն վերադառնալուց հետո ինքս գնացի տեսնելու, թե որտեղ է տեղադրված սարքավորումը, քանի որ մինչ այդ անձամբ չէի տեսել այն: Տեսա, որ սարքը տեղադրված է, իսկ վերեւի հարկի հարեւանը վերեւից նայում էր ներքեւ: Ես խնդրեցի, որ իջնի, որպեսզի միասին խոսենք: Նա ասաց, որ չի կարող, քանի որ պետք է ինչ-որ հեռախոսազանգ կատարի: Ասացի՝ լավ, հետո կզրուցենք: Նա թողեց իր հեռախոսահամարը եւ ասաց, որ քիչ անց կիջնի: Ես նրան նաեւ խնդրեցի, որ իր հետ բերի այն փաստաթղթերը, որոնց մասին ասում էր՝ ունի: Նա պատասխանեց, որ սարքը չի հանելու այդտեղից՝ ասելով՝ «ինչ ուզում եք, արեք»: Ես էլ ասացի՝ շատ լավ, եթե չեք պատրաստվում հանել, ապա մնացած գործընթացը կտեսնենք, թե ինչպես ենք լուծելու:

Մի քանի ժամ անց նա իջավ եւ թակեց տան դուռը: Ընտանիքս դուռը չբացեց, սակայն դիտանցքից հասկացել էին, որ վերեւի հարկի հարեւանն է: Այդ պահին կինս ինձ ասաց, որ նա ներքեւ է իջել: Ես զանգահարեցի նրան:

Զրույցի ընթացքում կրկին խոսեցինք այդ փաստաթղթերի մասին: Ես նշեցի, որ լավ պատկերացնում եմ, թե որ ատյաններից եւ մարմիններից պետք է համապատասխան թույլտվություններ ստացած լինեն, եւ խնդրեցի ներկայացնել այդ փաստաթղթերը: Նա կրկին պատասխանեց, որ սարքը տեղից չի հանելու եւ ասաց՝ «ինչ ուզում ես, արա»:

- Իսկ այդ ընթացքում Դուք նրան ներկայացե՞լ եք որպես Գեղարքունիքի մարզպետ:

- Ո՛չ: Ես որեւէ անգամ, որպես Գեղարքունիքի մարզպետ, չեմ ներկայացել եւ այդ հանգամանքը չեմ օգտագործել: Այդտեղ այլ մարդիկ էլ են եղել: Երբ ես քաղաքացու հետ խոսում էի պատշգամբից, ներկա էր նաեւ մի հարեւան, որը կարող է հաստատել մեր զրույցի բովանդակությունը: Ավելին՝ հենց քաղաքացին ինձ ասաց՝ «Դուք գիտե՞ք՝ ես ով եմ»: Ես հարցրեցի՝ «Ո՞վ եք»: Նա պատասխանեց, որ գլխավոր դատախազի մորեղբայրն է: Ես նրան ասացի՝ «Առավել եւս, որ Դուք գլխավոր դատախազի մորեղբայրն եք, նման բան չպետք է Ձեզ թույլ տաք: Ես վստահ եմ, որ գլխավոր դատախազը թույլ չի տա, որ իր մորեղբայրը որեւէ ապօրինի բան տեղադրի մարդկանց սեփականության տարածքում կամ խանգարի մարդկանց»: Դրանից հետո նա ասաց, որ կպարզի եւ կխնդրի գլխավոր դատախազին անդրադառնալ այդ հարցին: Մոտ երկու օր անց կառավարության շենքում հանդիպեցի գլխավոր դատախազին եւ նրան ասացի. «Տիկին գլխավոր դատախազ, մի խնդրանք ունեմ: Ձեր մորեղբայրը մեզ նման իրավիճակի մեջ է դրել: Կխնդրեմ միջամտել, որպեսզի այդ սարքավորումը տեղից հանվի»: Գլխավոր դատախազը, ի պատասխան, ասաց. «Ես մորեղբայր չունեմ, այդպիսի մարդ չկա»: Այսպիսով, ես որեւէ պահի չեմ ներկայացել որպես մարզպետ՝ քաղաքացու վրա ազդեցություն գործադրելու կամ նրան վախեցնելու նպատակով: Իմ պահանջը եղել է միայն պարզել սարքավորման տեղադրման օրինականությունը եւ համապատասխան փաստաթղթերի առկայությունը:

Զրուցեց՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ArmLur.am-ը շարունակում է իր ընթերցողներին ներկայացնել համայնքների ղեկավարներին, թե ովքեր են նրանք, ինչ պաշտոններ են զբաղեցրել եւ ինչ ունեցվածք ու եկամուտներ ունեն: Այս անգամ ուսումնասիրել ենք Փամբակի համայնքապետ Սուրեն Կոստանդյանի ունեցվածքը:

Սուրեն Կոստանդյանը 2018 թվականի հոկտեմբերի 21-ին ընտրվել է Վահագնի համայնքի ղեկավար, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 5-ին՝ Փամբակ խոշորացված համայնքի ղեկավար: Նա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է եւ ամուսնացած չէ:

Անշարժ գույք

Կոստանդյանի հայտարարագրից պարզ է դառնում, որ տարվա սկզբում նա ունեցել է Լոռու մարզի Փամբակ համայնքում գտնվող չորս հողամաս եւ մեկ բազմամյա տնկի: Դրանցից չորս հողամասերը ձեռք են բերվել 2001 թվականի հունիսի 29-ին, իսկ մեկ հողամասը՝ 2023 թվականի փետրվարի 27-ին: 2025 թվականի ընթացքում նա նոր անշարժ գույք չի ձեռք բերել եւ գույք չի օտարել:

Ավտոմեքենա

Համայնքապետի անվամբ հայտարարագրված է նաեւ 2003 թվականի արտադրության VAZ մակնիշի ավտոմեքենա, որը նա ձեռք է բերել 2011 թվականի հոկտեմբերի 20-ին: 2025 թվականին նոր մեքենա չի ձեռք բերել կամ օտարել:

Դրամական միջոցները

Սուրեն Կոստանդյանի բանկային հաշվի մնացորդը տարվա սկզբում եւ վերջում կազմել է 0 դրամ:

Կանխիկ դրամի մասով տարվա սկզբում նա հայտարարագրել է 6,500 դոլար եւ 2,500,000 դրամ: Տարվա վերջին կանխիկ միջոցները կազմել են արդեն 7,000 դոլար եւ 3,000,000 դրամ:

Այսինքն՝ տարվա ընթացքում նրա կանխիկ դոլարային միջոցներն ավելացել են 500 դոլարով, իսկ դրամային միջոցները՝ 500,000 դրամով:

Եկամուտը

2025 թվականին Սուրեն Կոստանդյանի հայտարարագրված եկամուտը կազմել է 4,231,175 դրամ: Ամբողջ գումարը ստացվել է աշխատանքի վարձատրության եւ դրան հավասարեցված այլ վճարումների տեսքով՝ Փամբակի համայնքապետարանի աշխատակազմից:

Հայտարարագրում նշված է նաեւ, որ Կոստանդյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է եւ Փամբակի խորհրդի նախագահը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱՅՐԱՄՈՎԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակներում, հանդիպել են Հայաստանի արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարար Արարատ Միրզոյանն ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը:

Ինչպես հայտնում են ՀՀ ԱԳՄԱ նախարարությունից, հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության կարեւորությանը եւ 2025 թվականի Վաշինգտոնի խաղաղության գագաթնաժողովի պայմանավորվածություններից հետո արձանագրված առաջընթացին:

Հատուկ ուշադրություն է դարձվել երկու երկրների միջեւ տնտեսական եւ տրանսպորտային ենթակառուցվածքների ապաշրջափակմանը: Միրզոյանն ու Բայրամովը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ առեւտրային ու տարանցիկ փոխգործակցությունը դիտարկել են որպես խաղաղության օգուտների գործնական օրինակ:

Նախարարները նաեւ մտքեր են փոխանակել տարբեր բազմակողմ հարթակներում դրական օրակարգ առաջ մղելու հնարավորությունների շուրջ եւ պայմանավորվել շարունակել ուղիղ երկխոսությունը:

Ա. Վ.

ԸՆԴՈՒՆԵԼ Է ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանը սեպտեմբերի 25-ին ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆլորիան Էսկյուդիեին:

Ռուբեն Ռուբինյանը շնորհավորել է Ֆլորիան Էսկյուդիեին պատասխանատու պաշտոնը ստանձնելու առթիվ եւ հաջողություն մաղթել նրա դիվանագիտական առաքելության իրականացման ընթացքում:

Հանդիպման ընթացքում կարեւորվել են Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ ձեւավորված բարեկամական հարաբերությունները՝ ընդգծելով դրանց հետագա խորացման ու ընդլայնման անհրաժեշտությունը:

Անդրադարձ է կատարվել երկու երկրների խորհրդարանների միջեւ ձեւավորված արդյունավետ համագործակցությանը եւ դրա հետագա ամրապնդման անհրաժեշտությանը:

Կողմերը կարեւորել են համագործակցության ընդլայնումը նաեւ տնտեսության, ենթակառուցվածքների, կրթության, մշակույթի եւ այլ ոլորտներում:

Ընդգծվել է, որ Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ Ռազմավարական գործընկերության հռչակագիրը նոր հնարավորություններ է ստեղծում հարաբերությունների հետագա խորացման ու բազմաբովանդակ զարգացման համար:

Ռուբեն Ռուբինյանը եւ Ֆլորիան Էսկյուդիեն մտքեր են փոխանակել տարածաշրջանային մի շարք հարցերի շուրջ:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԺԱՄԱՆԵԼ Է ՖՐԱՆՍԻԱ

Հռոմի պապ Լեւոն XIV-ը այսօր ժամանել է Ֆրանսիա՝ 18 տարվա ընթացքում երկրի առաջին պաշտոնական պապական այցի շրջանակում: Քառօրյա այցի ընթացքում նա հանդիպումներ կունենա Ֆրանսիայի ղեկավարության, Եվրամիության ներկայացուցիչների եւ կաթոլիկ եկեղեցում սեռական բռնության ենթարկված անձանց հետ:

Պապին Փարիզի Օրլի օդանավակայանում դիմավորել են Ֆրանսիայի իշխանությունները: Ֆրանսիայի եպիսկոպոսների համաժողովի նախաձեռնությամբ երկրի եկեղեցիների զանգերը յոթ րոպե հնչել են՝ որպես այցի մեկնարկը նշող խորհրդանշական արարողություն:

Լեւոն XIV-ը Փարիզում կհանդիպի Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ, ելույթ կունենա ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում՝ անդրադառնալով արհեստական բանականությանը եւ համաշխարհային խաղաղությանը, ինչպես նաեւ կմասնակցի Նոտր Դամի տաճարում կազմակերպվող արարողությանը:

Շաբաթ օրը նախատեսված է մեծ բացօթյա պատարագ Փարիզի Կոնկորդի հրապարակում եւ Ելիսեյան դաշտերում: Ֆրանսիայի իշխանությունները միջոցառմանը եւ հարակից տարածքներում ակնկալում են շուրջ 600 հազար մարդու մասնակցություն: Ընդհանուր առմամբ, պապի երկօրյա այցի ընթացքում Փարիզում սպասվում է մոտ մեկ միլիոն ուխտավոր եւ այցելու:

Փարիզից հետո Լեւոն XIV-ը կմեկնի Լուրդ՝ կաթոլիկների համար կարեւոր ուխտագնացության կենտրոն: Այնտեղ նա կհանդիպի եկեղեցում սեռական բռնության ենթարկված յոթ անձանց, որոնք բռնության են ենթարկվել մանկության կամ հասուն տարիքում:

2021 թվականին հրապարակված զեկույցի համաձայն՝ Ֆրանսիայում եկեղեցու ներկայացուցիչների կողմից շուրջ 70 տարվա ընթացքում սեռական բռնության է ենթարկվել մոտ 330 հազար երեխա: Ջոհերի մի մասը պապի հետ հանդիպումը կարեւոր քայլ է համարում, սակայն ակնկալում է նաեւ եկեղեցու կողմից կոնկրետ գործողություններ:

Այցի վերջին փուլում՝ երկուշաբթի օրը, Հռոմի պապը Մեցում ելույթ կունենա ԵՄ առաջնորդների առջեւ: Նրա ելույթի թեման է «Եվրոպայի արմատներին՝ հանուն խաղաղության եւ միասնության»:

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը պապական պատարագներին չի մասնակցի: Նրա փոխարեն Փարիզի մեծ բացօթյա պատարագին ներկա կլինեն վարչապետ Սեբաստիեն Լեկորնյուն եւ Մակրոնի կինը՝ Բրիջիտ Մակրոնը:

Ֆրանսիայում պապի այցի ընդհանուր արժեքը գնահատվում է մոտ 27 միլիոն եվրո, որի հիմնական մասը, ըստ հաղորդագրության, կհոգա կաթոլիկ եկեղեցին՝ նվիրատվությունների միջոցով:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵԼՈՒՅԹ

ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՏՆՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ

ՀՀ-ում սպասում են հակամարտության հետեւանքով Ադրբեջանում անազատության մեջ հայտնված հայերի վերադարձին: Այս մասին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 81-րդ նստաշրջանում իր ելույթի ժամանակ ասել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:



«Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերություններում լուծման կարիք ունեն մի քանի հազար անհետ կորածների ճակատագրի պարզաբանումը, որի շուրջ համագործակցելու պայմանավորվածություն ենք ձեռք բերել Ադրբեջանի հետ: Հայաստանը պատրաստ է շարունակել եւ խորացնել համագործակցությունը Ադրբեջանի հետ՝ ականազերծման հարցում: Եւ իհարկե, Հայաստանի Հանրապետությունում սպասում են հակամարտության հետեւանքով Ադրբեջանում անազատության մեջ հայտնված հայերի վերադարձին:

Այս հարցերի դեռեւս չլուծված լինելու հետ մեկտեղ՝ հոռետեսներին սնող մյուս պատճառը ժամանակ առ ժամանակ Հայաստանի եւ Ադրբեջանի որոշակի շրջանակներում, երբեմն պաշտոնական մակարդակում, կոնֆլիկտային խոսույթների օգտագործումն է: Կարծում եմ մենք՝ նկատի ունեմ Հայաստանն ու Ադրբեջանը, ավելի քան բավարար արդյունքների ենք հասել, որոնք մեզ համար պիտի ավելի արժեքավոր լինեն, քան կոնֆլիկտային խոսույթների օգտագործումը՝ լինի դա պատմության, թե պատմամշակութային հուշարձանների կամ որեւէ այլ բանի մասին:

Խաղաղության մասին հոգ տանելը, այն ամրապնդելն ու ինստիտուցիոնալ դարձնելը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ համագործակցության հիմնական թեման պետք է լինի: Արդեն երկուսուկես տարի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ փոխհրաձգության հետեւանքով զոհեր եւ վիրավորներ չկան, եւ սա, կարծում եմ, այն մեծագույն արժեքն է, որը ստեղծվել է վերջին տարիների համագործակցությամբ:

Անկախ Հայաստանի եւ անկախ Ադրբեջանի հարաբերություններում նախկինում երբեք այսպիսի ժամանակաշրջան չենք ունեցել, չնայած հայերն ու ադրբեջանցիները խաղաղ գոյակցության դարերի փորձ ունեն:

Մեր խնդիրը, սակայն, պատմական այդ փորձը վերականգնելը չէ, այլ ժողովրդական այդ փորձի հիման վրա միջպետական հարաբերություններ կառուցելը՝ հիմնված միմյանց տարածքային ամբողջականության, ինքնիշխանության եւ քաղաքական անկախության հարգման վրա: Սա, ի դեպ, ճշգրիտ այն խոսույթն է, որ Հայաստանն ու Ադրբեջանն արդեն իսկ համաձայնեցրել եւ նախաստորագրել են՝ երկու երկրների միջեւ խաղաղություն եւ միջպետական հարաբերություններ հաստատելու մասին համաձայնագրում:

Վաշինգտոնի խաղաղության գագաթնաժողովում նախաստորագրված այդ համաձայնագիրը ստորագրելն ու վավերացնելը Հայաստանի եւ Ադրբեջանի համատեղ օրակարգի հաջորդ խոշոր թեման է, եւ մենք հետեւողականորեն շարունակելու ենք աշխատանքն այս ուղղությամբ»,- ասել է Փաշինյանը իր ելույթում:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳՈՎԵՄՏԻ ԽՈՍՔԵՐ ԵՆ ՇՌԱՅԼԵԼ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Սպիտակ տանը պետական ընթրիք է կազմակերպել Չինաստանի նախագահ Սի Ծինփինի պատվին: Ընթրիքի ընթացքում երկու առաջնորդները խոսել են ԱՄՆ-Չինաստան հարաբերությունների կարեւորության եւ համագործակցության հնարավորությունների մասին:

Սի Ծինփինը, անդրադառնալով երկու երկրների պատմությանը, հիշատակել է ԱՄՆ-ի եւ Չինաստանի միջեւ նախկինում ձեւավորված համագործակցության դրվագները, այդ թվում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին համատեղ պայքարը եւ 1972 թվականին ԱՄՆ նախկին նախագահ Ռիչարդ Նիքսոնի այցը Չինաստան:

Չինաստանի առաջնորդը նշել է, որ Վաշինգտոնն ու Պեկինը պետք է շարունակեն համագործակցել՝ ընդգծելով, որ երկու երկրները կարող են առաջ մղել փոխշահավետ հարաբերություններ:

Թրամփն իր հերթին բարձր է գնահատել Սի Ծինփինի հետ հարաբերությունները եւ հանդիպումն անվանել է արդյունավետ:

Առաջնորդների քննարկումների առանցքում են եղել նաեւ արհեստական բանականությունը, առեւտուրը, Թայվանի հարցը եւ Իրանի շուրջ ստեղծված իրավիճակը: Միաժամանակ ԱՄՆ-ն ու Չինաստանը պայմանավորվել են երկարաձգել առեւտրային հրադադարը մինչեւ հունվար:

Սի Ծինփինը ԱՄՆ այցը կավարտի ուրբաթ՝ Սպիտակ տանը թեյի շուրջ հանդիպմամբ եւ Ազգային արխիվ այցելությամբ:

ՕԴ ԵՆ ԲԱՐՁՐԱՑՐԵԼ ԿՈՐԾԱՆԻՉՆԵՐԸ

Ֆինլանդիան եւ Շվեդիան արագ արձագանքման հերթապահության (QRA) շրջանակում կործանիչներ են օդ բարձրացրել՝ Ֆիննական ծոցի միջազգային օդային տարածքում ռուսական ինքնաթիռների խմբին նույնականացնելու համար:

Ֆինլանդիայի ռազմաօդային ուժերի փոխանցմամբ՝ միջադեպը տեղի է ունեցել հինգշաբթի: Երկու երկրների կործանիչները հայտնաբերել են ռուսական «Տու-134» տրանսպորտային ինքնաթիռ, ինչպես նաեւ «ՄիԳ-31» եւ «Սու-30» կործանիչներ:

Ռուսական ինքնաթիռները գտնվել են միջազգային օդային տարածքում: Ֆինլանդիայի ռազմաօդային ուժերը նշել են, որ սա երկու երկրների օդուժերի համատեղ առաջին օպերացիոն նույնականացման առաքելությունն է:

Շվեդիայի վարչապետ Ուլֆ Քրիստերսոնը հայտարարել է, որ Բալթիկ ծովը ներկայում ավելի խոցելի է, քան երբեւէ, սակայն միաժամանակ՝ ավելի պաշտպանված:

Բալթիկ ծովում լարվածությունը վերջին տարիներին աճել է, եւ սկանդինավյան երկրների կործանիչները պարբերաբար օդ են բարձրացվում ռուսական ինքնաթիռներին հետեւելու եւ նույնականացնելու նպատակով: Ռուսաստանի՝ 2022 թվականին Ուկրաինա ներխուժումից հետո Ֆինլանդիան եւ Շվեդիան հրաժարվել են երկարամյա ռազմական չեզոքությունից եւ անդամակցել ՆԱՏՕ-ին:

Միջադեպին զուգահեռ Դանիայի ռազմական հետախուզության ծառայությունը հայտարարել է, որ Ռուսաստանի կողմից ՆԱՏՕ-ի երկրների դեմ ռազմական գործողությունների ռիսկը աճում է: Միեւնույն ժամանակ ծառայությունը նշել է, որ ՆԱՏՕ-ի անդամ երկրի վրա Ռուսաստանի լայնածավալ ներխուժումը շարունակում է համարվել «խիստ քիչ հավանական», թեեւ այն ամբողջությամբ բացառել հնարավոր չէ:

Դանիական հետախուզության գնահատմամբ՝ Ռուսաստանը կարող է ակտիվացնել նաեւ այսպես կոչված հիբրիդային գործողությունները՝ ներառյալ դիվերսիաները, կիբերհարձակումները եւ Ուկրաինային արեւմտյան աջակցության խոչընդոտմանն ուղղված գործողությունները:

Եվրոպական երկրները վերջին տարիներին բարձրացրել են զգոնությունը՝ Ռուսաստանի կողմից հնարավոր միջամտությունների եւ անվտանգության սպառնալիքների ֆոնին:

Ա. Վ.

ՄԻԵԴ

ՄԵՐԺԵԼ Է ՄԻՋԱՆԿՅԱԼ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԸ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սեպտեմբերի 24-ին մերժել է Պետական եկամուտների կոմիտեի նախկին նախագահ, ֆինանսների նախկին նախարար Գագիկ Խաչատրյանի փաստաբանական թիմի կողմից Եվրոպական դատարանի կանոնների 39-րդ կանոնի հիման վրա միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ ներկայացված պահանջը:

Մասնավորապես, Գագիկ Խաչատրյանը դիմել էր ՄԻԵԴ խնդրելով ՄԻԵԴ-ին պարտավորեցնել ՀՀ կառավարությանը՝ վերացնել նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը եւ որեւէ կերպ չսահմանափակել նրա ազատությունը, դադարեցնել նրան պատգարակի վրա տեղափոխելու պրակտիկան, ապահովել նրա բժշկական օգնություն ստանալու իրավունքի արդյունավետ իրացումը, վերացնել նրա նկատմամբ կիրառված բացակայելու արգելքը եւ թույլ տալ բուժման նպատակով մեկնել Գերմանիայի Դաշնային Հանրապետություն:

Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակից «Արմենպրես»-ի հարցին ի պատասխան նշեցին, որ ՄԻԵԴ-ը ներկայացված պահանջը կոմունիկացրել էր Հայաստանի կառավարությանը՝ կողմերին ուղղելով վերաբերելի հարցեր եւ հնարավորություն տալով ներկայացնել իրենց դիրքորոշումները:

«Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի եւ դիմումատուի կողմից ներկայացված պատասխանները ստանալուց հետո ՄԻԵԴ-ը որոշել է ամբողջությամբ մերժել միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ Գագիկ Խաչատրյանի պահանջը: Այսպիսով, Դատարանի կանոնների 39-րդ կանոնի շրջանակներում ներկայացված պահանջների վերաբերյալ ՄԻԵԴ-ը միջանկյալ միջոց կիրառելու անհրաժեշտություն չի տեսել»,-ընդգծեցին գրասենյակից:

ՀՀ ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանն անցնում է առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու եւ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով, որի շրջանակում անհետաձգելի քննչական եւ վարութային գործողություններ են իրականացվել նրա, նրա որդու բնակարաններում, ինչպես նաեւ նրանց հետ փոխկապակցված շուրջ 21 ընկերությունների գրասենյակներում եւ մասնաճյուղերում: Գագիկ Խաչատրյանը սեպտեմբերի 1-ին ձերբակալվել էր: Քննչական կոմիտեն նրան կալանավորելու միջնորդություն էր ներկայացրել դատարան, որը բավարարվել էր սեպտեմբերի 2-ին:

ԼՈՒՐԵՐ

ԱՀԱՋԱՆԳ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ահազանգ է ստացվել զինծառայողի նկատմամբ ենթադրյալ բռնության եւ վատ վերաբերմունքի վերաբերյալ:

«Ահազանգը ստանալուց անմիջապես հետո Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի հանձնարարությամբ ՄԻՊ ներկայացուցիչներն արագ արձագանքման այց են իրականացրել Պաշտպանության նախարարության թիվ N զորամաս՝ ահազանգում ներկայացված հանգամանքները տեղում ուսումնասիրելու նպատակով:

Այցի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչներն առանձնազրույցներ են ունեցել զինծառայողների հետ, այդ թվում՝ այն զինծառայողի, որի նկատմամբ ենթադրյալ բռնության, վատ վերաբերմունքի վերաբերյալ ստացվել էր ահազանգը: Առանձնազրույցների բովանդակությունը խորհրդապահական է եւ ենթակա չէ հրապարակման:

Դեպքի հանգամանքների եւ զինծառայողի իրավունքների ապահովմանն առնչվող հարցերի ուսումնասիրությունը շարունակվում է: Հարցը գտնվում է Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո:

Մարդու իրավունքների պաշտպանը եւս մեկ անգամ ընդգծում է, որ զինված ուժերում բռնության եւ վատ վերաբերմունքի ցանկացած դրսեւորում անթույլատրելի է, իսկ նման դեպքերի վերաբերյալ յուրաքանչյուր տեղեկություն պետք է արժանանա պատշաճ արձագանքի եւ հանգամանքների բազմակողմանի քննության:

Մարդու իրավունքների պաշտպանը համանման յուրաքանչյուր դեպքով պահանջում է իրավասու մարմիններից իրականացնել ինչպես պատշաճ ներքին ուսումնասիրություն, այնպես էլ հիմքերի առկայության դեպքում՝ քրեական վարույթի շրջանակում գործի բազմակողմանի, արդյունավետ եւ պատշաճ քննություն: Վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման տեսանկյունից բացառիկ կարեւորություն ունեն դեպքերի պատշաճ քննությունն ու պատասխանատվության անխուսափելիությունը, եւ այդ ուղղությամբ պետությունը պետք է իրականացնի անհրաժեշտ ու բավարար քայլեր:

Ավելին, արդյունքների առնչությամբ պետական մարմինները պետք է հաշվետու լինեն նաեւ հանրությանը»,-նշված է հաղորդագրության մեջ:

ԱՐԳԵԼՎԱԾ ԻՐԵՐ

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Գորիս» տարածքային բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, սեպտեմբերի 23-ին՝ ժամը 16:15-ի սահմաններում, անձնական խուզարկության են ենթարկել կարճատեւ տեսակցության եկած դատապարտյալի եղբորը: Արդյունքում՝ քաղաքացու թեւատակից հայտնաբերվել է կպչուն ժապավենով ամրացված բջջային հեռախոս՝ բաժանորդային քարտով, ինչպես նաեւ՝ թմրամիջոցի նմանվող, 0,80 գրամ քաշով բուսական զանգված: Քաղաքացին ձերբակալվել է ՔԿԾ կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Գորիս» տարածքային բաժնի ծառայողների կողմից եւ հայտնաբերված արգելված իրերի հետ ներկայացվել ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչության Գորիսի քննչական բաժին:

ԼՈՒՐԵՐ

7 ՄԵՂԱԴՐՅԱԼ

Հակակոռուպցիոն կոմիտեում իրականացվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների համակցության հիման վրա 2026 թվականի օգոստոսի 20-ին՝ ժամը 09:00-ի սահմաններում, ավտոմեքենան կայանելու հարցի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի հարեւանությամբ բնակվող քաղաքացուն հարվածներ հասցնելու (ծեծի ենթարկելու) համար նույն քննչական բաժնի երկու քննիչների նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով:

Նույն օրը՝ ժամը 23:30-ի սահմաններում, հիշյալ քաղաքացուն ծեծի ենթարկելու առիթով վերջինիս ազգականի՝ ոստիկանության ծառայողի կողմից քննիչներից պարզաբանումներ ստանալու նատակով կայացած հանդիպումը վերաճել է խուլիգանության, որի կապակցությամբ ոստիկանության ծառայողի եւ նրա հետ գտնված չորս անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Պաշտոնատար անձանց կողմից ոստիկանության աշխատակցին խոշտանգելու,ինչպես նաեւ քննիչներից մեկի առողջությանը ծանր մարմնական վնասվածք պատճառելու առերեւույթ հանցագործությունների դեպքերով նախաքննությունը շարունակվում է:

Բոլոր 7 մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ՀՀ-ից բացակայելու արգելքը:

ԾԽԱԽՈՏ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՓՈՇԵՆՄԱՆ ԶԱՆԳՎԱԾ

Սեպտեմբերի 11-ին արտառոց դեպք է տեղի ունեցել Երեւանում: ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Դավթաշենի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Դավթաշենի դպրոցներից մեկում սովորող աշակերտուհու մոտ հնարավոր է կասկածելի իրեր լինեն: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, Դավիթաշենի համայնքային ոստիկանները պարզել են, որ այդ երեխան 17 տարեկան աղջիկ է, որից հետո ոստիկանները երեխայի խնողի հետ երեխային հրավիրել են ոստիկանության Դավթաշենի բաժին, որտեղ էլ անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են կրակայրիչ, վրացական գրառմամբ ծխախոտի փակ տուփ, էլեկտրոնային ծխախոտ եւ զիպ փականով 0,31 գրամ ընդհանուր քաշով սպիտակ գույնի փոշենման զանգված, որը երեխայի հայտարարության համաձայն «Լամալ» տեսակի դեղահաբի փոշի է: Երեխան իր ծնողին, ծնողն էլ իրավապահներին հայտնել է, որ այն գնվել է Դավթաշեն թաղամասում գտնվող դեղատներից մեկից: Դեպքի փաստով ոստիկանության Դավիթաշենի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

● *Սեպտեմբերի 14-ից 21-ը մայրաքաղաքում բացահայտվել է վարելու ընթացքում ծխելու 754 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

23 ԸՆՏԱՆԻՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՓՈՂ ԵՆ ՏՎԵԼ

Տավուշի մարզպետի աշխատակազմում գործում է մարզի զոհված, մահացած, հաշմանդամ դարձած զինծառայողների, ազատամարտիկների ընտանիքների բնակարանային պայմանները ուսումնասիրող, ստուգող հանձնաժողով: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Տավուշում նշված կատեգորիաների քանի՞ ընտանիք կարիք ունի բնակարանի: 2018-2026թվականներին այդ ընտանիքներից քանի՞սն է բնակարան ձեռք բերել, ի՞նչ միջոցներով»: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակներում ընդգրկված՝ զոհված /մահացած/ կամ հաշմանդամություն ունեցող նախկին զինվորականների բնակարանի կարիքավոր 23 ընտանիք 2018-2025 թվականներին ստացել են համապատասխան ֆինանսական միջոցներ բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու համար: Հերթացուցակներում հերթագրված են դեռեւս 71 մարդ»: 8 տարում զոհված, հաշմանդամ զինծառայողի 23 ընտանիքի են բնակարանի փող տվել, ինչը քիչ է:

ԲԵՐԴԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՔԱՐՈՒՔԱՆԴ ՎԻՃԱԿՈՒՄ ԵՆ

Իջեւան-Բերդ եւ հակառակ ուղղությամբ աշխատող հասարակական տրանսպորտի՝ միկրոավտոբուսի վարորդը դժգոհեց, որ Իջեւան-Բերդ հանրապետական նշանակության ավտոճանապարհի Վազաշենի հատվածում ավտոճանապարհի նորոգման նպատակով ճանապարհաշինարարները քանդել են ճանապարհի ծածկը, շինարարները հաճախ որոշ ժամանակով փակում են ճանապարհի այդ հատվածը, ինչի հետեւանքով իրենք նախատեսված ժամից ուշ են ուղերթն ավարտում: Բերդ քաղաքի բնակիչներն էլ դժգոհ են, որ քաղաքի շատ հատվածներ նորոգման նպատակով քանդել են, սակայն այդ ծրագրերն իրականացնող շինարարական կազմակերպությունները ձգձգվում են նորոգման աշխատանքները, ինչի պատճառով քաղաքի բնակիչները եւ հյուրերը դժվարանում են Բերդում տեղաշարժվել: Վերանորոգման աշխատանքների պատճառով Բերդ քաղաքի կենտրոնական՝Մաշտոցի փողոցում շինարարները մեծ, խոր փոս են փորել, որտեղով բաց եղանակով կոյուղաջրեր են հոսում: Այդ մեծ փոսի կողքով ամեն օր հարյուրավոր երեխաներ դպրոց են մեկնում,շնչելով կոյուղու ծանր հոտը: Բերդ քաղաքի որոշ փողոցներ, որոնք գտնվում են թեքության վրա, տուֆապատվել են: Տավուշի մարզի այլ քաղաքներում եւ գյուղերում փողոցների տուֆապատումը կատարվել է որակով, նորոգված փողոցներում ճանապարհի ծածկի անհարթություններ չկան: Բերդ քաղաքում փողոցների տուֆապատումը վատ որակով է արվել, վերանորոգված փողոցներում ավտոմեքենաները երթեւեկելիս դժվարություններ են ունենում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՒՂԵՐՁ

ՊԱՅՔԱՐԸ ՊԵՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂԱՑՆԵԼ

«Մայր Հայաստան» կուսակցության վարչության անդամ, ԱԺ նախկին պատգամավոր Արեգնազ Մանուկյանն ուղերձ է հղել փաստաբանների միջոցով:

«Սիրելի՛ ընկերներ, հարգելի՛ ժողովուրդ,

«Մայր Հայաստան» կուսակցության նախագահ Անդրանիկ Թեւանյանի դեմ մեկ մարդու ապօրինի հրահանգով «թխված» գործի շրջանակներում կալանավորվել էի նաեւ ես: Ու թեեւ այժմ իմ խափանման միջոցը փոխվել է տնային կալանքի, բայց դա չի նշանակում, որ մենք պետք է համեմատաբար հանգստանանք: Պայքարը պետք է շարունակել եւ ավելի ուժեղացնել, քանի որ մեր երկիրն օր օրի մխրճվում է գռեհիկ բռնապետության մեջ. քաղբանտարկյալների թիվն ավելանում է, ՀՀ-ի ներքին ու արտաքին մարտահրավերները՝ նույնպես:

Սա իմ առաջին ուղերձն է տնային կալանքում գտնվելիս: Իրականում, շփման սահմանափակումը կարճ ժամանակով բացվելուց հետո այժմ ավելի է խստացվել: Իսկ ընդհանուր առմամբ, սրանք ամբողջ Հայաստանն են դարձնում կալանավայր: Օգտվելով առիթից՝ շնորհակալություն եմ հայտնում բոլոր այն քաղաքական ուժերին, պատգամավորներին, հասարակական գործիչներին, լրատվամիջոցներին, շարքային քաղաքացիներին, անծանոթ մարդկանց, ովքեր աջակցում են մեզ, ըմբոստանում են այս հակահայկական իշխանությունների կամայականությունների դեմ, չեն լռում, սկզբունքայնություն են ցուցաբերում, մարդկային բարձր որակներ են դրսեւորում:

Ինչպես հայտնի է, Թեւանյանի «գործը» փլվել է արդեն նախաքննության փուլում: Ինձ շինծու արարք մեղսագրեցին, որպեսզի Թեւանյանի դեմ առաջադրված հորինովի մեղադրանքներին ճշմարտանման տեքս տային, բայց դա նրանց մոտ, բնականաբար, չստացվեց: Ու հիմա փակ դատավարություն են անցկացնում, որպեսզի ծածկեն իրենց խայտառակությունը: Բայց դե, արդարությունն ինչքան էլ բզկտվի, վերջում հաղթելու է»,-նշել է նա իր ուղերձում:Մանուկյանն ընդգծել է, որ աս ընթացքում քաջալերանքի եւ գովասանքի բազմաթիվ խոսքեր է ստացել: «Շատերն ասում են, որ հերոսություն եմ արել եւ կամք ցուցաբերել, քանի որ կեղծ ցուցմունքներ չեմ տվել Թեւանյանի դեմ, կալանքի եւ ապօրինաբար դատապարտվելու հեռանկարն աչքիս առաջ ունենալով՝ չեմ վաճառել խիղճս ու հոգիս, չեմ գնացել քստմնելի գործարքի:

Իմ կարծիքով՝ հերոսություն ասվածը շատ բարձրագոչ ձեւակերպում է: Ես ոչ թե հերոսություն եմ արել, այլ պարզապես ստորություն չեմ արել: Այս իշխանության հետ գործարքի գնալն ու «երկխոսելն» իսկական դավաճանություն կլիներ:

Եթե մենք վախենանք կալանքից ու դավաճանենք մեր գաղափարներին, սկզբունքներին, ապա իրավունք չենք ունենա ՀՀ քաղաքացիներից պարկեշտություն, ազնվություն, արժանապատվություն, հայրենասիրություն պահանջել:Թիմակցին, ընկերներին դավաճանելուց մինչեւ Հայրենիքի դավաճանություն կես քայլ է: Այնպես որ, ամեն մեկն իր սկզբունքների համար պետք է մինչեւ վերջ կռիվ տա ու նոր միայն դիմացինից նույնը պահանջելու իրավունք ստանա:

Ինչ մնում է մեր հետագա քայլերին, ապա ընդդիմադիր դաշտում պետք է գլխավոր հարցերում միասնական լինել: Իշխանությունն անանախադեպ կեղծիքներով պահած Նիկոլ Փաշինյանն օգտվում է մեր ոչ միասնական լինելուց: Նույնիսկ քաղբանտարկյալների պաշտպանության հարցում նկատվում է տարբերակում: Մինչդեռ չպետք է լինի իմ ու քո թիմի քաղբանտարկյալ հասկացությունը (ընդդիմադիր որոշ շրջանակներ ակնհայտորեն խուսափում են անգամ քաղբանտարկյալներից խոսել, ինչը ցավալի տպավորություն է թողնում՝ հատկապես երբ դա ֆիքսում ես կալանավայրում գտնվելու ժամանակ):

Չարիքը բոլորիս ու Հայաստանի դռանն է չոքել: Հատվածականությունը ոչ մի լավ տեղ չի տանելու: Պետք է «մեկը բոլորի ու բոլորը մեկի համար» սկզբունքով գործել, այլ ոչ թե սպասել մինչեւ դիմակավորվածները կամ քննչականի կամակատարները ներխուժեն քեզ մոտ ու դրանից հետո նոր միայն ոտքի կանգնել, բողոքել բռնաճնշումների դեմ:

Ինքս իմ ուժերի ներածին չափով ամեն ինչ անելու եմ, որ հատվածականությունը, մանր-մունր գզվրտոցները, նեղ կուսակցական շահերը դուրս մղվեն մեր կյանքից, եւ մենք միասնաբար կռիվ տանք այս թրքահպատակ իշխանությունների դեմ:-Կան հարցեր, որոնց շուրջ կարելի է միասնական օրակարգեր եւ գործողություններ պլանավորել: Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու եւ քաղբանտարկյալների պաշտպանությունը վերկուսակցական հարցեր են: Ի՞նչն է մեզ խանգարում այս հարցերում միասնական լինել: Մենք պարտավոր ենք վեր կանգնել կուսակցականությունից եւ համագործակցել:

Օրակարգային են նաեւ այս իշխանությունների վարած ներքին ու արտաքին քաղաքականությանը հակազդելու ծրագրեր ունենալը եւ կոնկրետ գործողություններ նախապատրաստելը՝ լինի դա ալիեւյան սահմանադրության մերժումը կամ Հայաստանի տարածքների հանձնումը:

Մի խոսքով՝պետք է հանրային լայն համախմբում եւ գաղափարական պայքար: Ազատություն Անդրանիկ Թեւանյանին, Ազատություն բոլոր քաղբանտարկյալներին, Ազատություն Հայաստանի ու Ադրբեջանի բանտերում տառապող քաղբանտարկյալներին ու պատանդներին,Հայաստանն առանց Նիկոլ Փաշինյանի»,-նշված է ուղերձում:

ԼՔԵԼ ԵՆ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԸ

Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյահուն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 81-րդ նստաշրջանում իր ելույթում քննադատություններ է հնչեցրել Իրանի, եվրոպական եւ տարածաշրջանային երկրների հասցեին: Նա հայտարարել է, որ Իրանի միջուկային օբյեկտների ոչնչացումը շատ բարդ գործ էր, սակայն դա իր կայացրած ամենահեշտ որոշումներից է եղել: Նրա ելույթից հատվածներ է մեջբերում The Times of Israel-ը:

Նրա ելույթի ընթացքում մի շարք երկրների պատվիրակություններ լքել են նիստերի դահլիճը:

«Եթե մենք դա արած չլինեինք, բոլորս մեռած կլինեինք, - հայտարարել է նա՝հավելելով, որ պաշտպանվելով՝ Իսրայելը նաեւ պաշտպանել է այն երկրներից շատերին, որոնց պատվիրակությունները լքեցին դահլիճը: - Իրականում, ուզում եմ՝ իմանաք, որ նրանց ղեկավարներից շատերը նույնիսկ մասնավոր կարգով մեզ շնորհակալություն են հայտնում Իրանի միջուկային օբյեկտները ոչնչացնելու համար»:

Նա նաեւ պնդել է, թե «մի օր, եւ հնարավոր է՝այդ օրը հեռու չէ» Իրանի կառավարությունը «կտապալվի»:

Նեթանյահուն նաեւ նշել է, որ Իսրայելի նման փոքր երկիրը երեք տարի շարունակ յոթ ճակատով պատերազմ է վարում ՀԱՄԱՍ-ի, «Հեզբոլլահ»-ի, հութիների, Իրանի, Իրաքի աշխարհազորայինների, Սիրիայի աշխարհազորայինների, Արեւմտյան ափում «պաղեստինցի ահաբեկիչների» դեմ:

Նեթնյահուն նաեւ քննադատել է եվրոպական երկրներին, որոնք վերջերս հայտարարել են Հորդանան գետի Արեւմտյան ափում իսրայելական բնակավայրերի նկատմամբ պատժամիջոցների սահմանման մասին:

Բացի այդ, Նեթանյահուն քննադատել է Նյու Յորքի քաղաքապետ Զոհրան Մամդանիին՝ նրան մեղադրելով հակասեմականության համար:

Նա հայտարարել է, որ Կատարը «միլիարդավոր դոլար է ծախսում ստեր տարածելու համար», իսկ Թուրքայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին անվանել է «բռնակալ», որը հերքում է Հայոց ցեղասպանությունը, օկուպացրել է Հյուսիսային Կիպրոսը, բանտարկում է լրագրողներին եւ ընդդիմադիրներին:

● *Մարզերում սեպտեմբերի 14-ից 21-ը բացահայտվել է վարելու ընթացքում ծխելու 865 դեպք:*

RATE.TRADING

ՆՈՐ ԹՎԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ



Թվային ֆինանսական ծառայությունների զարգացումն այսօր ենթադրում է ոչ միայն գործող բանկային պրոդուկտների կատարելագործում, այլեւ մասնագիտացված հարթակների ստեղծում, որոնք ֆինանսական ծառայությունները դարձնում են ավելի արդյունավետ եւ հասանելի: Այս մոտեցման արդյունքն է Rate.am-ի եւ IDBank-ի կողմից գործարկված Rate.Trading հարթակը՝ նախատեսված արտարժույթի առուվաճառքի թվային գործարքների համար: Հարթակը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց հնարավորություն է տալիս հետեւել հասանելի փոխարժեքներին, ընտրել համապատասխան պայմանները կամ առաջարկել իրենց նախընտրած փոխարժեքը: Գործարքը կատարվում է միայն այն դեպքում, երբ Բանկի կողմից տվյալ փոխարժեքով հայտը բավարարվում է:

«Rate.Trading-ի գործարկումը հիմնված է այն մոտեցման վրա, որ թվային ֆինանսական ծառայությունների զարգացումը պետք է արձագանքի հաճախորդների իրական կարիքներին եւ շուկայի փոփոխություններին: Մասնագիտացված թվային հարթակների ստեղծումը հնարավորություն է տալիս արտարժույթի փոխարկումներն իրականացնել էականորեն շահավետ փոխարժեքներով՝ գործարքները դարձնել ավելի պարզ, անվտանգ եւ արդյունավետ՝ միաժամանակ խնայելով հաճախորդների ամենաթանկ ռեսուրսը՝ ժամանակը», - նշել է rate.am-ի տնօրեն Գեւորգ Մամիկոնյանը:

Հարթակում այսօր հասանելի է տասը արժույթ՝ հայկական դրամը, ԱՄՆ դոլարը, եվրոն, ռուսական ռուբլին, վրացական լարին, ԱՄԷ դիրհամը, բրիտանական ֆունտը, չինական յուանը, ճապոնական իենը եւ շվեյցարական ֆրանկը:

Rate.Trading-ը հասանելի է նաեւ հավելվածի տեսքով, իսկ հարթակին կարելի է անցում կատարել Idram&IDBank հավելվածից՝ արտարժույթի առուվաճառքն անմիջապես սմարթֆոնից իրականացնելու համար:

«Պարզ ինտերֆեյսը եւ թվային միջավայրում գործարքների իրականացումը Rate.Trading-ը դարձնում են հարմար գործիք նրանց համար, ովքեր փնտրում են շահավետ փոխարժեքներ եւ գնահատում իրենց ժամանակը: Հարթակի գործարկումը միաժամանակ նպաստում է ֆինանսական ծառայությունների թվայնացմանը, արտարժույթի շուկայի թափանցիկության բարձրացմանը եւ ժամանակակից տեխնոլոգիաների ավելի լայն կիրառմանը: Rate.Trading-ը շարունակական զարգացման փուլում է. նախատեսվում է հարթակը համալրել արտարժութային գործարքների նոր գործիքակազմով՝ հաճախորդներին հնարավորություն տալով առավել արդյունավետ կառավարել իրենց ֆինանսական միջոցները», - նշել է rate.am-ի տնօրեն Գեւորգ Մամիկոնյանը:

Idbank-ը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ԱԺ-ՈՒՄ ԿՔՆՆԱՐԿՎԻ

ՀՈՒՆԻՍԻ 23-Ը ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՕՐ

Հայաստանում կարող է նոր օր սահմանվել՝ Հանրային ծառայողի օրը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Կառավարությունը Ազգային ժողով է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին նախագիծը, որով առաջարկվում է հունիսի 23-ը սահմանել որպես Հանրային ծառայողի օր:

Նախագծի համաձայն՝ օրենքի 23-րդ հոդվածից հետո նախատեսվում է լրացնել նոր՝ 23.1-րդ հոդված, որով ամրագրվելու է. «Հանրային ծառայողի օրը՝ հունիսի 23-ին»: Ուշագրավ է, որ նոր օրը ոչ աշխատանքային օր չի լինելու: Այսինքն՝ պետական համակարգի աշխատակիցները հունիսի 23-ին շարունակելու են աշխատել, պարզապես այդ օրը օրենքով կստանա մասնագիտական տոնի կարգավիճակ: Նախագծի հիմնավորմամբ՝ Հայաստանում հանրային ծառայության տարբեր ոլորտներում գործող բազմաթիվ մասնագիտական օրերի պայմաններում անհրաժեշտություն է առաջացել մեկ միասնական օրով ընդգծել հանրային ծառայության եւ հանրային ծառայողների դերը: Իսկ թե ինչ ընթացք կստանա այս նախաձեռնությունը՝ պարզ կդառնա արդեն խորհրդարանում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նախագիծը հոկտեմբերի 5-ին կքննարկվի ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում:

Նախագիծը հանձնաժողովում ներկայացնելու է վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վաչե Քալաշյանը: Նրա՝ որպես կառավարության ներկայացուցիչ նշանակման վերաբերյալ որոշումն արդեն ստորագրել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Հատկանշական է նաեւ նախագծի ընտրած ամսաթիվը: Հունիսի 23-ը ՄԱԿ-ի կողմից սահմանված Հանրային ծառայության միջազգային օրն է, եւ կառավարության նախագիծը Հայաստանի օրենսդրության մեջ այդ ամսաթիվը տեղայնացնելու նախաձեռնությունն է:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿՄԱՄՆԱԿՑԻ ARMENIAN AUTO SHOW–ԻՆ

Սեպտեմբերի 25-27-ը Կոնվերս Բանկը կմասնակցի Armenian Auto Show-ին՝ այցելուներին ներկայացնելով ավտոմեքենաների ձեռքբերման համար նախատեսված ֆինանսավորման լուծումներ:

Մասնավորապես, Armenian Auto Show 3.0-ում Կոնվերս Բանկը կներկայացնի ցուցահանդեսի այցելու ֆիզիկական անձանց համար մշակված ավտովարկավորման առաջարկը: Առաջարկը հասանելի կլինի միայն ցուցահանդեսի օրերին՝ հատուկ պայմաններով:

Բանկը Բիզնես հաճախորդներին կներկայացնի վարկային եւ լիզինգային լուծումներ՝ հնարավորություն տալով ընտրել հաճախորդների կարիքներին համապատասխան ֆինանսավորման տարբերակ, ձեռք բերել ավտոմեքենա եւ օգտագործել բիզնես նպատակներով:

Որոշ սահմանված չափանիշների համապատասխանելու դեպքում հաճախորդներին հասանելի կլինեն նաեւ պետական աջակցության եւ Բանկի գործընկերների ֆինանսավորման ծրագրերի շրջանակում նախատեսված առավելությունները, այդ թվում՝ քեշբեքերը:

Եթե առաջիկայում նախատեսում եք ավտոմեքենա ձեռք բերել անձնական օգտագործման համար կամ համալրել, արդիականացնել Ձեր բիզնեսը, սեպտեմբերի 25-27-ը այցելեք Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր: Կոնվերս Բանկի տաղավարում մեր մասնագետները կներկայացնեն հասանելի ֆինանսավորման տարբերակները, կպատասխանեն Ձեր հարցերին եւ կօգնեն ընտրել Ձեր նպատակներին առավել համապատասխան լուծումը:

Մանրամասն՝ conversebank.am
010 211 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԱՐԴԵՆ ԿԱՐԵԼԻ Է ՎՃԱՐԵԼ GLOVO–ՈՒՄ

Glovo-ում պատվերներ կատարելիս արդեն հնարավոր է վճարել Իդրամով. այս մասին պաշտոնապես հայտարարվեց Glovo Armenia-ի 5-ամյակին նվիրված միջոցառմանը: Այսուհետ պատվերը ձեւակերպելիս պարզապես անհրաժեշտ է վճարման հասանելի տարբերակներից ընտրել Իդրամը եւ կատարել վճարումը Idram&IDBank հավելվածի միջոցով:Իդրամի եւ Glovo-ի համագործակցության մասին երկու ընկերությունները հայտնել էին ամիսներ առաջ՝ համագործակցության հուշագիր ստորագրելով Glovo-ի Բարսելոնայի գրասենյակում, իսկ այսօր արդեն օգտատերերին հասանելի է Glovo-ում Իդրամով վճարելու հնարավորությունը: «-Թեեւ Իդրամն ու Glovo-ն գործում են տարբեր ոլորտներում, մեզ միավորում է մի կարեւոր սկզբունք՝ թվային ծառայությունները դարձնել ավելի պարզ, հասանելի եւ հարմար մարդկանց առօրյայում: Այս համագործակցությունը միայն վճարման նոր տարբերակի մասին չէ, այն եւս մեկ անգամ փաստում է, որ հայկական թվային էկոհամակարգը կարող է համագործակցել միջազգային խոշոր հարթակների հետ եւ առաջարկել լուծումներ, որոնք ստեղծում են իրական արժեք», - ասաց Իդրամի կոմերցիոն տնօրեն Գրիգորի Յոլյանը: Նոր հնարավորությունը պատվերի եւ վճարման գործընթացը դարձնում է ավելի արագ, պարզ ու հարմար՝ թույլ տալով օգտվել Glovo-ի ծառայություններից եւ վճարել արդեն ծանոթ ու նախընտրելի եղանակով:

Համագործակցության շրջանակում Իդրամի օգտատերերին սպասվում են նաեւ Glovo-ի հատուկ առաջարկներ եւ համատեղ արշավներ: «Կարծում ենք՝ մեր օգտատերերն էլ ավելի գոհ կլինեն այս նորությունից, քանի որ Իդրամը Հայաստանում թիվ մեկ վճարային համակարգն է: Մենք լսում ենք մեր օգտատերերին, հաշվի ենք առնում, թե նրանք ինչ են ցանկանում եւ այս համագործակցությունն էլ դրա արդյունքն է»,- ասաց Glovo Armenia-ի գլխավոր տնօրեն Թամար Կոջառողլանյանը:

Իդրամ ընկերությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ԿԱՏԱԿՈՎ ԾՆՎԱԾ ԳԱՂԱՓԱՐԸ ՎԵՐԱԾՎԵՑ ՌԵԱԼԻԹԻ ՇՈՒՐԻ

Քիմ Քարդաշյանի նոր ռեալիթի նախագիծը՝ «Team Moms: Baseball», ի սկզբանե ղարզաղես կատակ էր: Սակայն գաղափարը, որը Քարդաշյանն ու գործադիր ղրոդյուսեր Նատալի Էնտոն մի օր ֆենարկել էին, ի վերջո վերածվեց իրական հեռուստաշոուի:



Քարդաշյանը PEOPLE-ին պատմել է, որ գաղափարը ծնվել է երեք տարի առաջ, երբ նա եւ Էնտոն իրենց երեխաների հետ Իսպանիայում էին՝ ֆուտբոլային մրցաշարի մասնակցելու համար: Էնտոն, ով մարզիչ է, վերադարձել էր՝ պատմելով մրցաշարի ընթացքում տեղի ունեցած զվարճալի ու երբեմն լարված իրավիճակների, ինչպես նաեւ չափազանց նվիրված ծնողների մասին:

«Մենք մի տեսակ կատակեցինք՝ ասելով, որ սա հիանալի ռեալիթի շոու կլիներ: Խելահեղ կլիներ»,-պատմել է Քարդաշյանը:

Հետագայում նրանք գաղափարը ներկայացրել են մի քանի հեռուստատեսային ցանցերի, եւ, Քարդաշյանի խոսքով, «բոլորը միանգամից հետաքրքրվեցին»:

Սկզբում ընկերուհիները քննարկում էին՝ շոուն պետք է պատմի ֆուտբոլային, թե բասկետբոլային ծնողների մասին: Սակայն, հաշվի առնելով իրենց երեխաների հետաքրքրությունները տարբեր մարզաձեւերի նկատմամբ, վերջնական ընտրությունը կանգ առավ բեյսբոլի վրա:

Քարդաշյանն ու Էնտոն վաղուց են ընկերներ: Նրանց մտերմությունը սկսվել է երեխաների միջոցով. Քարդաշյանի դուստրը՝ Նորթ Ուեսթը, Էնտոյի երեխաներից մեկի հետ հաճախել է նախակրթարան: Էնտոն այդ ժամանակ նաեւ մարզիչ էր:

«Սկզբում մենք կապվեցինք մեր երեխաների միջոցով: Նրանք պարզապես շատ սիրեցին միմյանց եւ իսկապես դարձան լավագույն ընկերներ», - ասել է Էնտոն:

Նա նաեւ նշել է, որ թեեւ իր եւ Քարդաշյանի կենսակերպերը բավական տարբեր են, երկուսին միավորում է երեխաների հանդեպ սերը:

«Մենք շատ տարբեր կենսակերպեր ունենք, բայց իսկապես կարողացանք միմյանց հասկանալ մեր երեխաների հանդեպ ունեցած սիրո շնորհիվ», - ասել է նա:

«Team Moms: Baseball»-ը պատմում է այն մայրերի մասին, ովքեր մեծ նվիրումով աջակցում են իրենց երեխաներին՝ ապագա մարզական աստղեր դառնալու ճանապարհին: Շոուի ընթացքում մարզադաշտի տրիբունաներում զարգանում են ընկերություններ, մրցակցություններ եւ տարբեր կոնֆլիկտներ՝ցույց տալով, որ բեյսբոլը այս ընտանիքների համար պարզապես խաղ չէ, այլ ապրելակերպ:

Նախագծում ներկայացված են Baldri, Feldhacker, Mears, Scoffone, Taylor եւ Wolczik ընտանիքները: Քարդաշյանի խոսքով՝ շոուն արդեն իսկ հետաքրքրություն է առաջացրել հանդիսատեսի շրջանում: «Այս շոուի մասին երբեք այսքան շատ մարդկանցից չեմ լսել՝ «Աստված իմ, ես էլ էի մտածում, որ սա պետք է ռեալիթի շոու դառնա» կամ «Միշտ հույս ունեի, որ նման շոու կլինի»», - նշել է նա: «Team Moms: Baseball»-ը արտադրվել է ITV America-ի, Kim Kardashian Productions-ի եւ Skydance Sports-ի կողմից եւ այժմ հասանելի է **Paramount** հարթակում:

ՄԱՐԶԱԿԱՆ

1 ՄԼՆ ԵՎՐՈ ԲՈՆՈՒՍԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼ Է

Իսպանիայի հավաքականի ֆուտբոլիստներից մեկն իր՝ 2026 թվականի Աշխարհի գավաթի հաղթանակի բոնուսը, որը գնահատվում է մոտ 1 միլիոն եվրո, նվիրաբերել է Իսպանիայի ֆուտբոլի ֆեդերացիայի աշխատակազմին, armsport-ի փոխանցմամբ՝ հաղորդում է As-ը:

Իսպանական ֆուտբոլի թագավորական ֆեդերացիան (RFEF) եւ ֆուտբոլիստները համաձայնության են եկել մրցանակային գումարի բաշխման համակարգի շուրջ՝ հիմնվելով թիմի՝ Աշխարհի գավաթում ցուցադրած արդյունքների վրա: Որքան երկար էր թիմը մնում Հյուսիսային Ամերիկայում, այնքան ավելի շատ միջոցներ էին հատկացվում ֆուտբոլիստներին եւ մարզչական անձնակազմին: Ընդհանուր վճարումները կազմել են մոտ 50 միլիոն եվրո:

Համաձայնագրի պայմանների համաձայն՝ 26 ֆուտբոլիստից յուրաքանչյուրը գիտեր, որ ունի գրեթե 1 միլիոն եվրո բոնուս՝ Աշխարհի գավաթի տիտղոսը նվաճելու համար: Սակայն ֆուտբոլիստներից մեկը որոշել է հրաժարվել իր բոնուսից, որպեսզի գումարը ուղղվի RFEF-ի աշխատակազմին:

Այս ֆուտբոլիստը ցանկացել է եւ դեռեւս ցանկանում է անանուն մնալ: Իր արարքով նա ցանկանում էր իր երախտագիտությունը հայտնել նրանց, ում համարում է իր ուղեկիցները այս ճանապարհորդության ընթացքում՝ այն անձնակազմին, որը աշխատում է թիմի հետ «կուլիսների հետեւում», հատկապես երկարատեւ մարզական հավաքների ժամանակ:

ՀԱՂԹԵԼ Է ԱՄՆ-Ի ՀԱՎԱՔԱԿԱՆԻՆ

Ուզբեկստանի Սամարղանդ քաղաքում ընթացող շախմատի համաշխարհային 46-րդ օլիմպիադայի 8-րդ խաղափուլում Հայաստանի կանանց հավաքականը 2.5:1.5 հաշվով առավելության է հասել ԱՄՆ-ի հավաքականի նկատմամբ, գրում է armsport-ը:

Թիմին հաղթական միավոր է բերել գրոսմայստեր Էլինա Դանիելյանը՝հաղթելով գրոսմայստեր Իրինա Կրուշին:

Միջազգային վարպետ Լիլիթ Մկրտչյանի, կանանց գրոսմայստեր Մարիամ Մկրտչյանի եւ կանանց միջազգային վարպետ Սուսաննա Գաբոյանի խաղերն ավարտվել են ոչ-ոքի արդյունքով:

8 խաղափուլից հետո Հայաստանի կանանց հավաքականը 16 հնարավորից ունի 14 թիմային միավոր (7 հաղթանակ, 1 պարտություն):

ԴԱՐՁԱՎ ԹԻՄԱԿԻՑԸ

Կազանի «Ռուբինը», որի կազմում հանդես է գալիս Հայաստանի հավաքականի ֆուտբոլիստ Ուգոչուկվու Իվուն, հայտարարեց «Ինտերի» նախկին հարձակվող Էդի Սալսեդոյի հետ պայմանագիր կնքելու մասին, գրում է armsport-ը:

24-ամյա ֆուտբոլիստի պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2027 թվականը: Իտալացին կազանյան թիմում կկրի 10 համարի մարզաշապիկը:

Սալսեդոն «Ինտերի» կազմում հանդես է եկել 2018-ից 2025 թվականներին:

24-ամյա հարձակվողի վերջին ակումբը հունական ՕՖԻ-ն էր, որը նա լքեց այս ամռանը: Անցյալ մրցաշրջանում իտալացի հարձակվողը բոլոր մրցաշարերում անցկացրել է 36 հանդիպում՝ խփելով 13 գոլ եւ կատարելով երեք գոլային փոխանցում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈՐԱՄՈՒՏ

Սեպտեմբերի 24-ին մեկնարկեց ՈՒԵՖԱ Ազգերի Լիգայի 2026/27 մրցաշրջանի խմբային փուլը: Կայացավ A Լիգայի 2-րդ խմբի առաջին տուրի հանդիպումը Նիդերլանդների եւ Գերմանիայի հավաքականների միջեւ:

Երկու հավաքականներում իրենց նորամուտը նշեցին Յուրգեն Կլոպն ու Չավին, գրում է armsport-ը:

Ամստերդամում կայացած հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝1-1 հաշվով:

13-րդ րոպեին նիդերլանդացի պաշտպան Վիրջիլ վան Դեյկը բացեց հաշիվը՝ անկյունայինից գլխով հարվածով, սակայն գոլը չեղարկվեց հարձակվող Բրայան Բրոբիի կողմից դարպասապահ Մարկ-Անդրե տեր Շտեգենի նկատմամբ թույլ տրված խախտման պատճառով: Գերմանացի հարձակվող Կայ Հավերցը վնասվածք ստացավ առաջին խաղակեսում եւ չկարողացավ շարունակել խաղը: Նրան փոխարինեց հարձակվող Յունես Էբնուտալիբը՝ նորամուտը նշելով հավաքականում: Քիչ անց արդեն Նիդերլանդները կորցրեց իր հարձակվողին՝ Բրոբիին, կրկին վնասվածքի պատճառով. նրան փոխարինեց Միրդենկը: Բայց, մինչ այդ գերմանացիներն արդեն հասցրել էին բացել հանդիպման հաշիվը. Ադեյեմին օգնեց աչքի ընկնել Նմեչային: Առաջին խաղակեսից հետո հաշիվը 1-0 էր՝ հօգուտ հյուրերի:

Երկրորդ խաղակեսում տանտերերը կարողացան խուսափել պարտությունից. ավելացված ժամանակում Չավիի թիմի կազմում աչքի ընկավ Գակպոն:

Զուգահեռաբար ընթացող այս խմբի մյուս խաղում Հունաստանի հավաքականը 2-1 հաշվով կամային հաղթանակ տոնեց Սերբիայի հետ արտագնա հանդիպմանը:

Երկրորդ տուրում Նիդերլանդների հավաքականը կհանդիպի Սերբիայի, իսկ Գերմանիայի հավաքականը՝ Հունաստանի ընտրանու հետ:

ՆՈՐ ԱԿՈՒՄԲ ՈՒՆԻ

Բասկետբոլի Հայաստանի ազգային հավաքականի խաղացող Յուրա Մելիքյանը կարիերան կշարունակի Բուլղարիայում՝ միանալով «Բոտեւ 2012» ակումբին: Այդ մասին հայտնում է Հայաստանի Բասկետբոլի ֆեդերացիայի մամուլի ծառայությունը, փոխանցում է armsport-ը: 20-ամյա բասկետբոլիստի նոր թիմը 2026/27 մրցաշրջանում հանդես կգա Բուլղարիայի Ազգային բասկետբոլային լիգայում (NBL):

Մելիքյանը նոր մրցաշրջանի նախապատրաստական փուլն անցկացրել է Բուլղարիայի գործող չեմպիոն «Բալկանի» կազմում՝ մասնակցելով մի շարք ստուգողական հանդիպումների: «ՏՖՏ Սկոպյեի» դեմ խաղում նա գրանցել է դաբլ-դաբլ՝ վաստակելով 13 միավոր եւ կատարելով 13 ռեբաունդ:

Նախապատրաստական շրջանից հետո Մելիքյանը միացել է «Բոտեւ 2012» ակումբին եւ արդեն մասնակցել նոր թիմի կազմում առաջին ստուգողական հանդիպմանը: «Լեւսկիի» դեմ խաղում նա գրանցել է դաբլ-դաբլ՝ 12 միավոր եւ 11 ռեբաունդ:

Մինչ Բուլղարիա տեղափոխվելը Մելիքյանը հանդես է եկել լատվիական «Լատվիաս Ունիվերսիտատե» եւ շվեյցարական «Սթարվինգս Բազել» ակումբներում:

● *Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում սեպտեմբերի 27-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Մադագասկար» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Արդյո՞ք Կանոնակարգի 40-րդ կետի դրահանջը տարածվում է նաեւ այն դեպքերի վրա, երբ 22.1-րդ կետի համաձայն՝ առանց առերես շփման գործարքը կամ գործարար հարաբերությունը գնահատվել է միջին ռիսկ:

Ռուբեն Գրիգորյան, 48 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Կանոնակարգի 27-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ առանց առերես շփման գործարքը կամ գործարար հարաբերությունը փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) բարձր ռիսկի չափանիշ է, ինչը նշանակում է, որ նմանատիպ պրոդուկտներից օգտվող հաճախորդների առնչությամբ հաշվետվություն տրամադրող անձը պետք է իրականացնի հավելյալ պատշաճ ուսումնասիրության միջոցառումներ: Իբրեւ հաճախորդին ֆիզիկապես չտեսնելուց բխող ՓԼ/ԱՖ ռիսկերի զսպման մեխանիզմ՝ ի լրումն հավելյալ պատշաճ ուսումնասիրության միջոցառումների, Կանոնակարգի 40-րդ կետը սահմանում է նաեւ, որ հաշվետվություն տրամադրող անձը առանց առերես շփման գործարար հարաբերության շրջանակներում պետք է պահանջի, որ առաջին վճարումը կատարվի Օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի «ա»-«գ» ենթակետերով սահմանված պահանջներին բավարարող ֆինանսական հաստատությունում հաճախորդի անվամբ բացված հաշվով:

Առանց առերես շփման գործարար հարաբերություններին վերաբերող վերոգրյալ պահանջը բխում է ՖԱԹՖ-ի 10-րդ հանձնարարականից, որը եւս սահմանում է այն իբրեւ բարձր ռիսկային գործարար հարաբերությունների ռիսկի զսպման մեխանիզմի տարր:

Այսպիսով, այն դեպքերում, երբ հաշվետվություն տրամադրող անձը, հիմք ընդունելով Կանոնակարգի 22.1-րդ կետը, կկատարի ռիսկերի վերլուծությունը, իր ներքին ընթացակարգերով կնախատեսի հաճախորդին ֆիզիկապես չտեսնելուց բխող ռիսկերի զսպման միջոցառումներ (օրինակ՝ գումարի խիստ սահմանափակում, պրոդուկտից օգտվող հաճախորդների խմբերի սահմանափակում բացառապես ռեզիդենտ եւ ֆիզիկական անձ հաճախորդներով, հաճախորդի պատշաճ ուսումնասիրության տվյալների ստացում գործընկեր ֆինանսական հաստատությունից եւ այլն), նշվածի արդյունքում առանց առերես շփման գործարք կամ գործարար հարաբերություն ենթադրող պրոդուկտի ռիսկը կգնահատի միջին, ինչպես նաեւ համապատասխան վերլուծության արդյունքները Կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված կարգով կտրամադրի ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնին, Կանոնակարգի 40-րդ կետով սահմանված պահանջի կատարումը անհրաժեշտ չէ:

ՀՀ ԿԲ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞ւմ կողմից եւ ի՞նչ նպատակով է իրականացվում երեխայի (սանի) կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների գնահատումը եւ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը:

Միլենա Լալայան, 39 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Սանի՝նախադպրոցական կրթական (հիմնական) ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանները, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումները սահմանելու նպատակով իրականացվում է սանի կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից:

Սովորողի՝ հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանները, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումները սահմանելու նպատակով իրականացվում է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից:

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Կոտայքի մարզում՝ Երեւան-Սեւան ավտոճանապարհին, հրդեհ է բռնկվել թեփով ու ալյուրով բարձված բեռնատարում. ավտոմեքենան վերածվել է մետաղե ջարդոնի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 5 + 10 + 20 + 25
	Կոտայքի լեռներ	+ 5 + 9 + 20 + 24
	Կոտայքի նախալեռներ	+ 15 + 17 + 27 + 29
	Գեղարքունիք	+ 6 + 11 + 18 + 23
	Լոռի	+ 8 + 13 + 18 + 22
	Տավուշ	+ 9 + 13 + 18 + 22
	Արագածոտնի լեռներ	+ 5 + 9 + 20 + 24
	Արագածոտնի նախալեռներ	+ 14 + 18 + 26 + 30

	Արարատ	+ 13 + 17 + 27 + 31
	Արմավիր	+ 11 + 15 + 30 + 32
	Վայոց ձորի լեռներ	+ 6 + 9 + 22 + 25
	Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 17 + 30 + 32
	Սյունիքի լեռներ	+ 6 + 9 +17 + 21
	Սյունիքի նախալեռներ	+ 8 + 12 + 22 + 26
	Սյունիքի հովիտներ	+ 14 + 18 + 27 + 30
	Երեւան	+ 15 + 17 + 29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*